## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար կենցաղային ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2021/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«20» հոկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Լիլիթ Մանուկյան՝** ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության պետ

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հրաչ Բաբախանյան՝** ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության ավագ մասնագետ

**Արտակ Օհանյան՝** ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության տնտեսվար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գոռ Եսայան՝** Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

**1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2021/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա (18.10.2021թ.) ժամը 16:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 19.10.2021 թ., ժամը 16:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Գնվելիք ապրանքի անվանումը | Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | դռան փականներ | 100.000 |
| 2 | դռան փականի միջուկ | 125.000 |
| 3 | դռան բռնակ | 25.000 |
| 4 | էլեկտրական լամպեր | 80.000 |

| | | |
|---|---|---|
| 5 | էլեկտրական լամպեր | 25.000 |
| 6 | էլեկտրական լամպեր | 120.000 |
| 7 | օճառի տարա | 125.000 |
| 8 | ձեռքի թղթե սրբիչներ | 180.000 |
| 9 | մեկանգամյա օգտագործման բաժակներ | 75.000 |

**3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| N | Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|---|
| 1 | «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ | Ք. Երևան, Բաբաջանյան 43շ, 15 |
| 2 | «Բիգ Պլաստ» ՍՊԸ | ք. Երևան, Արցախի 46/2 |

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

**6.«ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2021/11» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը (անունը) | Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 2 | «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ | 37500 | 20 % | 45000 | 37500 | 20 % | 45000 | |
| 2 | «Բիգ Պլաստ» ՍՊԸ | 104160 | 20 % | 124992 | 104160 | 20 % | 124992 | |
| 4 | «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ | 54166.67 | 20 % | 65000 | 54166.67 | 20 % | 65000 | |
| 7 | «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ | 77083.34 | 20 % | 92500 | 77083.34 | 20 % | 92500 | |
| 8 | «Բիգ Պլաստ» ՍՊԸ | 125000 | 20 % | 150000 | 125000 | 20 % | 150000 | |

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 19.10.2021թ. և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներ են համարվել՝

- 2-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ-ն,
- 8-րդ չափաբաժնի մասով «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն:

**7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարությունների/ առկայության մասին.**

«Ֆասթ Բիլդ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունները/:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

«Ֆասթ Բիլդ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունները (Հավելված 1) և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**9. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

***- 2-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Ֆասթ Բիլդ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,***

***-8-րդ չափաբաժնի մասով «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,***

***-1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ոչ մի հայտ չի ներկայացվել***

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագրեր:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Նախագահ՝

_____ Լիլիթ Մանուկյան

Անդամներ՝

_____ Հրաչ Բաբախանյան

_____ Արտակ Օհանյան

Քարտուղար՝

_____ Գոռ Եսայան